զկնի. եւ բերին զչար կարապետն եկեալ, և հարց և փորձ արարեալ իշխանացն եւ եպիսկոպոսին. եւ սա մերթ երդմամբ և մերթ ինքեաւր առնէր և չիք ի մեղս լինէր: Եւ սկսեալ եպիսկոպոսին թէ Ժողովո՛ւրդք և քահանա՛յք, դայս մարդս ի՞նչպէս գիտէք: Եւ ամենեքեան վկայեցին, ոմըն թէ Զար է, ոմըն թէ Բանասարկու է, ոմըն թէ Սա երբեմըն խաչ գողացաւ եւ ոմըն թէ Բոզի հետ կոխվեցաւ: Եւ եպիսկոպոսն ասացեալ. Զոր դուք ասէք՝ ճշմարիտ է, և ես ինքնին վկայեմ դմա, զի բազում անգամ եկեալ ի քաղաքս եւ զդորա անառակութիւնն եւ զչարութիւնն լըեալ եմ եւ տեսեալ: Եւ եհարց աշխարհականաց այնմ եկեղեցոյն, և նոքա զնոյն ասացին թէ Ցորժամ երէց-նեըն խորհուրդ կ'առնէին և մուշավէրէ, սա էր գլուխն վասն եղիազար վարդապետին թէ Փախուցենք. եւ ի մէջ այսմ բանիս է ինքն, քանզի հանապազ տեսանէաք զսա ընդ Սուրբ Սարգսու էսիլի թոռ կոչեցեալ չարին հետ, զի ընդ նմա երթալով և գալով խօսակցէին. երբեմն սա ի նորա դուռն և երբեմն զնա ի սորա դուռն: Եւս եւ զմի երէց զարիալ եւ օտար վասն ժողովի եկեալ թէ Մի թապախ բռնեմ ի դուռս եկեղեցոյն հրամանաւ և նամակաւ եղիազար վարդապետին, զնա բազում դանիւք ծեծեր է թէ Դու զայն թուրքի անունն կու տաս, եւ նա լալով եկեալ դառնացաւ մեզ. եւ եպիսկոպոսն ունկն դնէր բանիցս: Եւ եղև յորժամ այս՝ և բերել ետուր զաւագէրէց եկեղեցոյն, և նա ասաց թէ Սորա բարի չեմ կարեր ասել. եւ բերել ետուր զերիցունն մի մի, եւ նոքա վկայեցին թէ Զար է, եւս և թէ Այջահամբուր կու դոնանայ: Եւ եպիսկոպոսն դատ արարեալ և զփիլոնն խնդրեալ, և բերաւ զփիլոնն: Եւ ասաց եպիսկոպոսն. Զայս կարգս քեզ ո՞վ երետ. ասաց թէ եպիսկոպոսն. և նա ասաց թէ կարգն մի է. ահա՛ առի զքո փիլոնն